

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2020 թվականի
նոյեմբերի 25-ին առցանց կայացած Գիտական Խորհրդի N3 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 36 անդամներից 34-ը (ցուցակը կցվում է):

Նախքան նիստի բացումը դեկան Մ.Ա.Գրիգորյանն առաջարկեց 1 րոպե լռությամբ հարգել զոհված զինվորների հիշատակը:

Նիստը վարելու նպատակով նախագահ ընտրվեց պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը:

Օրակարգ

1. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը 2019-2020
ուս.տարում կատարած աշխատանքների վերաբերյալ /զեկ. դեկան Մ.Ա.Գրիգորյան/
2. ԵՊՀ Գիտխորհրդի անդամի առաջադրում
3. Լսարանների անվանակոչում /զեկ. դեկան Մ.Ա.Գրիգորյան/
4. Ընթացիկ հարցեր

Նիստի օրակարգը հաստատելուց հետո

ԼՄԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաշվետվությունը մեկ տարում կատարած աշխատանքի վերաբերյալ (հաշվետվությունը կցվում է):

Հաշվետվությունն ավարտելուց հետո դեկան **Մ.Գրիգորյանը** պատասխանեց տրված հարցերին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը նշեց, որ ընթացիկ ծանր տարում Մ.Ա.Գրիգորյանի կատարած աշխատանքը անգնահատելի է: Հետևապես առաջարկեց դեկանի կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

դոց Պ.Գ. Դավթյան – Ամեն տարի լսում ենք Մարատ Արիսի կատարած աշխատանքը որպես ֆակուլտետի ղեկավարի, ինչը բարձր եմ գնահատում, սակայն այժմ ցանկանում եմ գնահատել Մարատ Արիսի մարդկային և ընկերական բարձր հատկանիշները: Ուզում եմ գնահատել նրա լսելու, ընդառաջելու, գնահատելու և ճիշտ որոշումներ կայացնելու ունակությունը: Գիտական աշխատանքների կատարման որակի և հրատարակվող հոդվածների ուղղությամբ Մ.Գրիգորյանի կողմից որդեգրած խստապահանջության և հետևողական քաղաքականությունը նպաստեց գիտական մակարդակի բարձրացմանը և ֆակուլտետի հեղինակության բարձրացմանը: Ամբիոնները հագեցվում են նոր սարքավորումներով:

Խոսքի ավարտին Պ.Դավթյանը շնորհակալություն հայտնեց ֆակուլտետում կատարված աշխատանքների համար և մաղթեց երկար տարիների աշխատանք: Առաջարկեց մեկ տարվա կատարված աշխատանքը գնահատել բավարար:

դոց Ս.Ռ. Սուվարյան. Շնորհավորեց ֆակուլտետի գիտխորհրդի նոր անդամներին:

- Երբ խոսում ենք փորձի և երիտասարդության մասին, պետք է գիտակցենք, որ միայն ավյունով և էներգիայով հնարավոր չի ղեկավարել այն միջավայրը, որտեղ կան բազմաշերտ երևույթներ: Մենք համալսարանի այն ֆակուլտետներից ենք, որ չնայած ներկայիս ծանր պայմաններին շարունակում ենք աշխատել լիարժեք և արդյունավետ, սա Մարատ Արիսի մոտեցումն է կրթության վերաբերյալ: Այս համաճարակային ծանր պայմաններում ֆակուլտետում թե՛ ուսանողների և թե՛ դասախոսական անձնակազմի համար համակարգչային տեխնիկայի բացակայության հետ կապված խնդիր չի եղել: Մեր կառավարիչները սիրում են միայն վերահսկել, ղեկանի մոտեցումն այլ է՝ նա ոչ միայն վերահսկում է այլ նախօրոք ծրագրավորում է, պլանավորում է, կազմակերպում է: Սա կառավարման կարևորագույն խնդիրներից է: Կարևոր է ղեկանի մոտիվացիան և ճիշտ ուղղորդումը հանուն ինչի: Մենք կարողացանք հաղթահարել այս բարդ իրավիճակը ղեկանի շնորհիվ:

Խոսքի ավարտին Ս.Սուվարյանն առանձնակի շեշտադրությամբ ընդգծեց ղեկանի հայրենասիրությունը:

դոց Ա.Թ. Գրիգորյան – Ցանկանում եմ նշել պարոն Մ.Գրիգորյանի վերաբերմունքը ուսանողի նկատմամբ, ուշադիր հոգատար, բոլոր հարցերում կանգնած է նրա թիկունքին: Նա

միշտ նշում է, որ կոչված ենք աշխատելու ուսանողների համար, բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստելու համար: Նշեց այն մեծ եռանդը, որն ունի պարոն Գրիգորյանը և խնդրեց շարունակել աշխատել նույն ոգևորությամբ: Առաջարկեց մեկ տարվա կատարած աշխատանքը գնահատել լավ:

դոց.Վ.Վ.Գրիգորյան – Ասելով Գրիգորյան Մարատ հասկանում ենք ղեկավարելու փորձ, ճկունություն, մանևրելու ունակություն, խելամտություն, որը պետք է դառնա բուհական կառավարման համակարգում օրինակելի, ոպես չափանիշ: Մեկ տարվա կատարած աշխատանքը գնահատում եմ լավ:

դոց.Ս.Ա.Առաքելյան-Միանում եմ իմ ընկերների կողմից հնչեցրած մտքերին: Երբ ես հիվանդացա covid-ով առաջին մարդկանցից մեկը, ով անընդհատ զանգում էր և իր հոգատարությունն ու օգնությունն էր առաջարկում դա պարոն Գրիգորյանն էր: Հոգատարությունը դեկանին բնորոշ գծերից մեկն է: Դեկանի աշխատանքը գնահատում եմ բավարար:

Օրբելյան Անահիտ – Ֆակուլտետի գիտխորհրդի նոր անդամ եմ, ցանկանում եմ իմ շնորհակալությունը հայտնել այն աշխատանքի համար, որը բարձր մակարդակով կատարել և կատարում է Մ.Գրիգորյանն ի օգուտ ֆակուլտետի, չնայած երկրում տիրող պանդեմիայի և պատերազմական վիճակի: Սա մեծ գնահատանքի է արժանի:

Մահակյան Սվետա – Շնորհակալություն հայտնեց նիստը պատշաճ մակարդակի կազմակերպելու համար անդրադարձավ նաև դեկանատի կողմից իրականացված գերազանց աշխատանքին:

- Չեմ կարող չբարձրաձայնել ուսանողների ձայնը ընկեր Սուվարյանի և ընկեր Քելյանի կատարած աշխատանքների վերաբերյալ, նրանց կողմից կատարած մեծածավալ և դրական աշխատանքը: Նրանք միշտ եղել են մեր կողքին և իրենց ջանքերով յուրաքանչյուր խնդիր ստացել է իր լուծումը: Ցանկանում եմ ուսանողության անունից գոհունակություն հայտնել դեկանին, փոխդեկաններին և ամբիոնի վարիչին ֆակուլտետում տարված աշխատանքների համար:

պրոֆ.Ա.Ռ.Ավագյան – Ուսուցման նոր համակարգի անցնելուն պես անմիջապես երևաց դեկանի, դեկանատի և ողջ կոլլեկտիվի հմտությունը, ինչը նույնպես կազմակերպված է բարձր մակարդակով: Ֆակուլտետի դեկանի, փոխդեկանների և

դեկանատի աշխատակիցների ջանքերով ուսման ընթացքը չդանդաղեց, այլ ներդաշնակվեց նոր պայմաններին: Անցած մեկ տարվա ընթացքում դեկանը և, նրա դեկավարությամբ, դեկանատն ամեն ինչ արեց ուսուցումը չխաթարելու համար: Գտնում եմ, որ դեկանի և դեկանատի կատարած աշխատանքը արժանի է գնահատել բավարար:

դոց.Ս.Ս.Քեյյան – Չեմ կարող չփաստել ձեր ուսանողակենտրոն աշխատանքը ցանկացած ուսանողի համար պատասխանատվություն կրող ձեր մոտեցումը: Չկա գեթ մեկ ուսանող ով բացասական կարտահայտվի ձեր կողմից ցուցաբերած մոտեցման վերաբերյալ: Մենք կարողացանք կարճ ժամանակում ամբիոններն ապահովել անհրաժեշտ սարքավորումներով՝ հեռավար ուսուցումը չխափանելու համար: Հնարավորինս լավ կազմակերպվեց ավարտական աշխատանքների և պրակտիկայի կազմակերպումը: Կուզենայի նշել նաև դեկանի բոլոր ջանքերը ռեկտորատում ֆակուլտետի յուրաքանչյուր աշխատակցի շահերը բարձրաձայներու և պաշտպանելու ուղղությամբ:

Ելույթների ավարտից հետո ձայն խնդրեց Մ.Ա.Գրիգորյանը

- Նախ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել կատարած աշխատանքը գնահատելու և ասված դրական խոսքերի համար: Մտածենք ինչպես լավը դարձնեն իրավիճակը: Դաստիարակենք երիտասարդ սերունդին հայրենասեր և բարձր գիտելիքներով օժտված մասնագետներ: Ես ծանր եմ տանում այս ողբերգությունը, որը կատարվեց մեզ հետ, մեր երկրի հետ, պետք է դիմակայենք և լինենք միասնական և շարժվենք այն լավի հույսով որը կա:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. դեկան Մ.Ա.Գրիգորյանի ներկայացրած հաշվետվությունն ընդունել և 2019/2020 ուս.տարում ֆակուլտետում կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

Քվեարկության արդյունքում՝ ԿՈՂՄ-34, ՁԵՌՆՊԱՀ-0, ԴԵՄ-0:

ՈՐՈՇԵՑԻՆ. դեկան Մ.Ա.Գրիգորյանի ներկայացված հաշվետվությունը և մեկ տարվա կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

2. ԼՍԵՑԻՆ. Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի անդամ առաջադրելու հարցի վերաբերյալ: Մ.Գրիգորյանը նշեց.

- Լրացել է ԵՊՀ գիտխորհրդի գործունեության 5 ամյա ժամկետը: Ֆակուլտետին հատկացվել է ընտրովի մեկ տեղ և ես առաջարկում եմ ԵՊՀ գիտխորհրդի կազմում ընդգրկելու համար առաջադրել դոց.Ս.Ռ.Սուվարյանի թեկնածությունը: Համոզված եմ, որ նա արժանիորեն կներկայացնի ֆակուլտետը ԵՊՀ գիտխորհրդում:

Այլ թեկնածուների առաջադրում չեղավ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. դոց. Ա.Թ.Գրիգորյանը, պրոֆ.Ա.Ռ.Ավագյանը, դոց. Պ.Գ.Դավթյանը, ովքեր պաշտպանեցին դոց.Ս.Ռ.Սուվարյանի թեկնածությունը և նշեցին, որ բարձր են գնահատում Սեյրան Սուվարյանի դասախոսական, գիտական և կազմակերպչական հատկանիշները:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել դոց.Սեյրան Ռաֆիկի Սուվարյանի ԵՊՀ գիտխորհրդի կազմում ընդգրկելու թեկնածությունը **կողմ` 34-ը, դեմ` 0, ձեռնպահ` 0** արդյունքներով:

3. ԼՍԵՑԻՆ. Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի թիվ 420Ա լսարանը նույն ամբիոնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Սուրեն Մելիքբեկյանի անվամբ և Ռեզիդնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի թիվ 324 լսարանը` Երկրաբանության բաժնի շրջանավարտ Ալեք Սիմոնյանի անվամբ անվանակոչելու հարցի վերաբերյալ: - Սա մեր պարտքն է, փառք և պատիվ մեր ուսանողներին – ասաց Մ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

Նիստի նախագահ

Վ.Պ.Վարդանյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան